NIKOLAY HOVHANNISYAN. IL Problema Del Karabakh. Il Faticoso Percorso Verso la Liberta e l'independenza, *Roma, Edizioni Studio 12, 2011, 172 p.*

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ղարաբաղի հիմնախնդիրը. Ազատության և անկախության փշոտ ճանապարհը, *Հռոմ, Ստուդիո 12 հրատ., 172 էջ:*



Շատ լայն է միջազգային մեծ հռչակ վայելող ականավոր արևելագետ-միջազգայնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, արտասահմանյան մեկ տասնյակից ավելի միջազգային ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նրա գիտական նախասիրությունների մեջ իր ուրույն տեղն է գրավում էթնոքաղաքական կոնֆլիկտների, նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որին նա նվիրել է մի ամբողջ շարք՝ մենագրական ուսումնասիրություններ և գիտական հոդվածներ, որոնց զգալի մասը լույս է տեսել արտասահմանում՝ օտար լեզուներով: Դրանց թվում իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում անգլերենով հրատարակված նրա «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը. Ազատության և անկախության փշոտ ճանապարհը» արժեքավոր մենագրությունը, որը վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը: 2011 թ. այս աշխատությունն անգլերենից թարգմանվեց իտալերեն և հրատարակվեց Հռոմում Իտալիայի արտաքին գործերի նախարարության Միջազգային դիվանագիտական ակադեմիայի խրախուսանքով և Իտալիայում ՀՀ դեսպան դոկտոր Ռուբեն Կարապետյանի աջակցությամբ: Գրքի ներկայացումը Իտալիայի դիվանագիտական հանրությանը և պատմաբան-մասնագետներին տեղի ունեցավ 2011 թ. մայիսի 25-ին Հռոմում՝ Դիվանագիտական ակադեմիայի գիտաժողովների սրահում, և մայիսի 28-ին Միլանում՝ Իտալիայի հայերի միության կենտրոնատեղիում: Իտալական կողմի հրավերով մասնակցել և զեկուցումով հանդես է եկել հեղինակը:

Գիրքը լայն արձագանք ստացավ Իտալիայում և արժանացավ մասնագետների բարձր գնահատականին: Այն բնութագրվեց որպես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված իտալերեն առաջին գիտական լուրջ ուսումնասիրություն: Իտալացի քաղաքագետները և ԶԼՄ-ները շարունակում են անդրադառնալ հայ գիտնականի այդ աշխատությանը: Դրա վկայությունն է այս տարվա հոկտեմբերի կեսերին Իտալիայի ամենահեղինակավոր «Եվրասիա» ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի համանուն պարբերա-

կանում հրատարակված՝ այդ կենտրոնի առաջատար հետազոտող, Իտալիայում հայտնի քաղաքագետ Ջուլիանո Լոնգոյի գրախոսականը, որն ամբողջությամբ ներկայացնում ենք թարգմանաբար.

Խմբ. «Քանի՞ էջ հարկավոր կլինի Լեռնային Ղարաբաղի երկարատև և արդյունավետ ողբերգությունն ամփոփելու համար»:

Սահմանամերձ շրջանի այն հիմնահարցը, որը մինչև օրս վշտացնում է հայ ազգին, կարծես անելանելի փակուղի լինի: ՀՀ ԳԱԱ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանին «Ղարաբաղի հիմնախնդիրը. Ազատության և անկախության փշոտ ճանապարհը» (Ստուդիո 12 հրատ.), 200 էջից պակասն էլ է բավականացրել, որ հիմնավոր և արդյունավետ ամփոփի վերոնշյալ տարածաշրջանի բնակիչներին դեպի ինքնորոշում և ազատություն տանող երկարուձիգ և վշտալի ուղու պատմությունը:

Լեռնային Ղարաբաղը կամ Արցախը (հնում այսպես է կոչվել տարածաշրջանը) մի տարածք է՝ ընկած Հայաստանի և Ադրբեջանի միջև այն ժամանակներից ի վեր, երբ հանրապետությունները միացան Խորհրդային Միությանը: ԽՍՀՄ կառավարությունը, իբրև Թուրքիայի հետ մտերմանալու ռազմավարական քայլ, 20-ական թթ. որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի շրջանը, որի բնակչության գերակշիռ մասը հայեր էին, մտցրնել Ադրբեջանի կազմի մեջ: Բաքվի կառավարության իրականացրած էթնիկ զտման փորձերից հետո Արցախը բազմիցս փորձեց որոնել հետադարձ ուղի դեպի Հայաստան և դեպի անկախություն, որը տևեց մինչև ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիները: Պայքարը կարծես նպատակակետին հասավ 80-ականների վերջին և 90-ականների սկզբին՝ շնորհիվ Ադրբեջանի կազմից դուրս գալու բարենպաստ հանրաքվեի, սակայն խորհրդային կառավարության փլուզումը խափանեց հանրաքվեի պաշտոնական ճանաչումը՝ տուրք տալով ադրբեջանական կողմի հուզումներին և զինված բախումներին:

Գրքի ողջ շարադրանքը իր իսկ պարզության մեջ խոր բովանդակություն ունի: Յուրաքանչյուր գլուխ ինքնին Արցախի պատմության առանձնահատուկ փաստերի վերաբերյալ խոր ուսումնասիրություն է: Այն հայկական կողմի դժգոհությունների և դրանց օրինականության բոլոր կողմերի մասին փաստացի մանրամասների համապարփակ նկարագրություն է, որը միաժամանակ հիմնավոր պատասխանում է ադրբեջանական կողմի բոլոր հավակնոտ պահանջներին:

Գրքի գլխավոր թեմաներից մեկը իրականում ոչ միայն Բաքվի կառավարության դժգոհությունների անհիմն լինելը բացահայտելն է, այլև Ադրբեջանի՝ իբրև պետության գոյության պատմական հիմքերը կասկածի տակ առնելը:

Պրոֆ. Հովհաննիսյանի վերլուծությունը սկսվում է տարածաշրջանի պատմական, աշխարհագրական և ազգային-մշակութային հնագույն փաստերից՝ բացահայտելու համար, որ Արցախը հայերինն է՝ որքան էլ դա լինի որևէ արտաքին դժգոհության պատճառ:

Հիմնվելով վերոհիշյալ նախաբանի վրա՝ հեղինակը գլուխ առ գլուխ դեպքերի զարգացման մասին մանրակրկիտ շարադրանքով հասնում է մինչև 90-ական թվականների պատերազմը և հրադադարը, որն ուժի մեջ է մինչ օրս, չնայած որ այն մշտապես խախտվում է:

Գրքի բովանդակության եզրահանգմանը հեղինակը հասնում է տարածաշրջանի կոնֆլիկտից դուրս գալու բազմազան առաջարկությունների, երկար, ճշգրիտ և չընդհատվող շղթայի միջոցով: Այնուհետև եզրափակվում է մի վերջաբանով, որով գիտակցվում է Լեռնային Ղարաբաղի ներկայիս կարգավիճակը. պետական մի միավոր, որը հռչակվել է անկախ, ինքնուրույն մի պետություն, որը դավանում է ժողովրդավարական արժեքներին: Գիրքն առավել արժևորվում է արծարծված թեմայով, որն անարդարացիորեն անտեսել են mainstream-ի շատ պատմաբաններ, ինչպես նաև պատմական փաստերի վերակառուցման աննախադեպ ճգրտությամբ և ի վերջո այն ոճով, որով հեղինակը նկարագրում է պատմական փաստերը և տալիս դրանց հիմնավորումները:

Աշխատությունը, չնայած արձակի չեզոք ոճին, վկայում է բանիմաց և արհեստավարժ պատմաբանի օբյեկտիվության և գիտական մտքի ուշադրության մասին:

Այն թույլ է տալիս արծարծվող թեմայի շուրջ սրտացավ վերաբերմունքով և հույզերով համակել իր ընթերցողին՝ աներևակայելի և աննկուն կերպով կարողանալով վերջինիս ներգրավել (հատկապես ամենանշանակալից պահերին)՝ առանց որևէ հուզաարտահայտչամիջոցի դիմելու:

Պրոֆ. Հովհաննիսյանը կենսունակություն է հաղորդում իր հայրենակիցների ազատության ձգտմանը՝ չանտեսելով գիտական վերլուծության մեթոդը, որն իր ուրույն տեղն է գտել վերոնշյալ աշխատության մեջ:

ՋՈՒԼԻԱՆՈ ԼՈՆԳՈ
«Եվրասիա» ռազմավարական
ուսումնասիրությունների կենտրոնի
առաջատար մասնագետ